ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ Մ. ԳՈՐԿՈՒ ԱՆՎԱՆ №5 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Հեքիաթի ուսուցումը կրտսեր դպրոցականների ստեղծարարության զարգացման միջոց

Մասնակից՝ Սիմոնյան Լուսինե

Դպրոց՝ <<Վաղարշապատի Ռ. Պատկանյանի անվան №9 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ

Վերապատրաստող՝ Աննա Ստեփանյան

Երևան 2023 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....3

1. Հեքիաթների դերը և նշանակությունը կրտսեր դպրոցական տարիքում.....5
2. Հեքիաթների ուսուցման դերը և նշանակությունը որպես կրտսեր դպրոցականների ստեղծարարության զարգացման միջոց.....8

Եզրակացություն.....18

Օգտագործված գրականության ցանկ.....20

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Աշխատանքի համար ընտրված թեմայի արդիականությունը պայմանավորված է թե՛ գիտական և թե՛ պրակտիկ գործոններով:

Հեքիաթները դասավանդման իրենց յուրահատուկ ձևն ունեն, որը պայմանավորված է նրանց ժանրային առանձնահատկություններով: Հեքիաթի դասավանդումը ունի երկու հիմնական փուլ՝ բովանդակության կամ սյուժեի հաղորդում և հեքիաթային կամ երևակայական կողմի բացահայտում: Սրանք երկուսն էլ խիստ կարևոր ու անհրաժեշտ են նյութի յուրացման ու նրանից բխող կրթական ու դաստիարակչական նպատակների իրականացման համար և երբեք չեն կարող փոխարինել միմյանց:

Հաճախ հեքիաթներն ավանդվում են պատմվածքի նման, այսինքն՝ սովորեցնում են այն կարդալ, բառերը բացատրել և բովանդակությունը վերարտադրել: Այս դեպքում նյութի մշակումը մնում է կիսատ, ավանդման պրոցեսն ավարտվում է բնագրի մատուցման աստիճանով միայն, իսկ երկրորդ փուլ՝ վերլուծությունն ու դրանից հետևող տրամաբանական եզրակացությունների բխեցումը, մնում է չկատարված, և ուսուցումը փաստորեն իր բուն նպատակին չի հասնում:

Տարրական դասարաններում հեքիաթներն ամենից առաջ պետք է դասավանդել որպես գեղարվեստական ստեղծագործություններ, այսինքն՝ նախապատրաստական զրույցի միջոցով հող նախապատրաստել այն ճիշտ ընկալելու համար, ամբողջ նյութի արտահայտիչ ընթերցման միջոցով ապահովել նրա գեղարվեստական ու դաստիարակչական ներգործությունը, սովորեցնել լավ կարդալ, անծանոթ բառերն ու մտքերը բացատրել, հեքիաթի բովանդակությունը մանրամասնորեն ու համառոտ, փոփոխելով ու ստեղծագործորեն վերարտադրել, գործող անձերն ու նրանց կատարած գործողությունները նկարագրել կամ բնութագրել, հարցերով ամփոփել հեքիաթի վերաբերյալ երեխաներին հաղորդած տեղեկությունները և այլն:

Աշխատանքի նպատակը և խնդիրները: Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել և ներկայացնել **հեքիաթի ուսուցումը կրտսեր դպրոցականների ստեղծարարության զարգացման միջոց:**

Նշված նպատակն իրագործելու համար աշխատանքի հիմքում դրվել և լուծվել են հետևյալ հիմնական խնդիրները.

- ուսումնասիրել հեքիաթների դերը և նշանակությունը կրտսեր դպրոցական տարիքում,
- ներկայացնել հեքիաթների ուսուցման դերը և նշանակությունը որպես կրտսեր դպրոցականների ստեղծարարության զարգացման միջոց:

Աշխատանքի մեթոդական և տեղեկատվական հիմքերը: Աշխատանքում առաջադրված խնդիրների լուծման համար մեթոդական հիմք են ծառայել մի շարք ինտերնետային հոդվածները:

Աշխատանքի կառուցվածքը և ծավալը: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

Աշխատանքային տեքստը կազմում է 20 տպագրական էջ:

ԳԼՈՒԽ 1. ՀԵՔԻԱԹՆԵՐԻ ԴԵՐԸ ԵՎ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ

Հեքիաթների դերը երեխաների զարգացման գործում բազմազան է՝ սկսած երևակայությունը զարգացնելուց մինչև ճիշտ խոսքի ձևավորում:

Հեքիաթը երեխաներին մատչելի լեզվով նրանց կյանք է սովորեցնում, պատմում չարի ու բարու մասին: Երեխաներն ավելի հեշտ են ընկալում հեքիաթը, քան թե մեծահասակների դաստիարակչական քարոզները: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ երեխաները, որոնց փոքր հասակից սկսած հեքիաթներ են պատմել, ավելի շուտ են սովորում իրենց մտքերը ճիշտ արտահայտել:

Հեքիաթների հիմնական նպատակն է զարգացնել երեխայի երևակայությունը և ստեղծագործական պոտենցիալը: Մանկական հեքիաթները ընդլայնում են երեխայի բառապաշարը, օգնում են ճիշտ և տրամաբանական խոսք կազմել: Կարևոր է նաև այն, որ հեքիաթները երեխայի խոսքը դարձնում են ավելի էմոցիոնալ և պատկերավոր: Ձևավորվում է հարցերը ճիշտ ձևակերպելու ունակություն: Երեխաներն ընդհանրապես իրականությունը պատկերավոր են ընկալում, իսկ հեքիաթները հենց նպաստում են իրականության ճիշտ ընկալմանը: Երեխաները հեքիաթների միջոցով պատկերավոր են ընկալում նաև չարն ու բարին:

Հեքիաթներում միշտ հաղթում է բարին, ինչը երեխային կօգնի հաղթահարել կյանքի դժվարությունները՝ ենթագիտակցությունում ունենալով բարու հաղթանակի գաղափարը: Նույն հեքիաթը երեխային կարելի է մի քանի անգամ պատմել, որպեսզի նաև լավ ընկալի հեքիաթի բուն ասելիքը:

Հեքիաթների դերը երեխաների կյանքում բազմազան է: Դրանք զարգացնում են երևակայությունը, մտածողությունն ու նույնիսկ ճիշտ խոսքը: Դեռ հին դարերից հեքիաթները մնում են յուրաքանչյուր երեխայի դաստիարակման անբաժան մասը: Հեքիաթներն օգնում են ուսուցիչներին մատչելի լեզվով երեխային ծանոթացնել կյանքին, ծանոթացնում են չարի և բարու հետ:

Հեքիաթներն երեխաների համար ավելի հասկանալի են, քան մեծահասակների բարդ ու խճճված զրույցները:

Երեխաների կյանքում հեքիաթը շատ կարևոր տեղ է զբաղեցնում: Նրա օգնությամբ երեխաները սկսում են վաղ խոսել և իրենց մտքերը ճիշտ ու գրագետ արտահայտել: Հեքիաթները նաև նպաստում են լավ վարքի դրսևորմանը, այլ անձանց հետ շփման կարողությանը:

Երեխաների համար հեքիաթները պետք է ընթերցել <<ճիշտ>> ժամանակ, երբ նրանք հանգիստ են և լավ տրամադրություն ունեն: Հեքիաթի ամենալավ ժամանակը քնից առաջ ընկած ժամանակահատվածն է, երբ երեխան հանգիստ պառկած է տաք անկողնում և հնարավորություն կա միասին քննարկել հեքիաթը: Հեքիաթը պետք է կարդալ հանգիստ, կենտրոնացած և հաճույքով: Այդպիսի ընթերցանությունը երեխային ավելի շատ դրական էներգիա կփոխանցի և ավելի օգտակար կլինի:

Հեքիաթի դերը երեխայի դաստիարակության գործում անհնար է չնկատելը: Երեխաները սովորում են հասկանալ հերոսների ներաշխարհը, վերապրել նրանց անցած ուղին: Սովորում են հավատալ բարու ուժին: Հեքիաթների շնորհիվ կարելի է ոչ միայն հետաքրքիր ու օգտակար ժամանակ անցկացնել, այլ նաև երեխայի անհանգստությունը վերացնել:

Հեքիաթն օգնում է հարստացնել երեխայի բառապաշարը, ինչպես նաև խթանում կապակցված խոսքը: Հեքիաթի շնորհիվ երեխայի խոսքը դառնում է ավելի զգայական ու գեղեցիկ: Այս կախարդական պատմությունները ձևավորում են հարցեր տալու ունակությունը, բառակապակցություններ ու նախադասություններ կազմելու հմտությունը:

Երեխաների կյանքում հեքիաթների կարևորագույն դերերից մեկն այն է, որ այնտեղ միշտ բարին է հաղթում: Հետագայում դա երեխային կօգնի սովորել հաղթահարել կյանքի դժվարությունները: Կյանքն, իհարկե, իր ուղղումները կմտցնի, բայց, այնուամենայնիվ, երեխայի ենթագիտակցության մեջ ոչինչ չի կորում: Միևնույն հեքիաթը կարելի է և պետք է կարդալ մի քանի անգամ: Դա կնպաստի, որ երեխան ճիշտ ըմբռնի հեքիաթում ներդրված իմաստը: Որպես կանոն, երբ երեխան ամբողջությամբ ընկալում է հեքիաթի իմաստը, նրա հետաքրքրությունը կորում է դրա նկատմամբ: Բացի այդ, յուրաքանչյուր երեխա հեքիաթի մեջ գտնում է այն, ինչն իրեն հետաքրքիր է:

Հեքիաթ ընթերցելիս խորհուրդ է տրվում նախ ծանոթնալ նրա բովանդակությանը (եթե անծանոթ հեքիաթ է), ապա այն ձևափոխել տվյալ տարիքային խմբին համապատասխան տերմիններով, դաժան հատվածները ձևափոխել և այլն։

Հեքիաթը յուրաքանչյուր փոքրիկի լիարժեք զարգացման ամենամատչելի տարբերակներից մեկն է: Այդպես եղել է, կա ու կլինի: Պետք չէ թերագնահատել հեքիաթի դերը երեխայի կյանքում: Ճիշտ ընտրած հեքիաթը դրական ազդեցություն կթողնի երեխայի հուզական ներաշխարհի վրա, կուղղի և կլավացնի նրա պահվածքը, ինչպես նաև կզարգացնի սեփական անձի և ուժերի նկատմամբ հավատը:

ԳԼՈՒԽ 2. ՀԵՔԻԱԹՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԴԵՐԸ ԵՎ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՍՏԵՂԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ

Տարրական դասարանների ընթերցարաններում ամենից հաճախ հանդիպող նյութերից մեկը հեքիաթներն են: Հեքիաթները ժողովրդական բանահյուսության ամենահին ու ամենատարածված ստեղծագործություններից են, դրանք ծագել են մարդկության մանկության շրջանում, սակայն այսօր էլ շարունակում են ստեղծվել և հուզել ընթերցողներին իրենց անմիջականությամբ, պարզությամբ ու խոր լավատեսությամբ:

Կրտսեր դպրոցական տարիքի երեխաներին տարրական դասարաններում հանձնարարելի են համարվում կենդանագրական ու իրապատում հեքիաթները միայն, իսկ հրաշապատում հեքիաթները սովորաբար այդ տարիքի երեխաների խորհուրդ չի տրվում կարդալ[1]:

Կենդանագրական հեքիաթները առաջացել են խոր նախնադարում, երբ մարդը նոր էր սկսում կենդանիներին ընտելացնել, դրա համար էլ այս հեքիաթներում գործող անձերը հիմնականում կենդանիներ են: Կենդանական հեքիաթներից հետագայում առաջացել են առակները, որոնցում նույնպես գործող անձերը հիմնականում կենդանիներն են:

Իրապատում հեքիաթներում հեքիաթային ոչ այնքան փաստերն են՝ գործողություններն ու գործող անձիք, որքան գործողությունների կամ սյուժետային գծի լուծումները, որոնք, ինչպես հատուկ է հեքիաթներին, շատ պարզ ու դյուրին լուծում են ստանում, որպիսին իրականության մեջ երբեք չի կարող լինել: Մայրենի լեզվի ընթերցարաններում կան ոչ միայն ժողովրդական հեքիաթներ, այլև հեքիաթների գրական մշակումներ[2]:

Պետք է նկատել, որ անցյալում մեծ վեճեր են եղել հեքիաթները դասագրքերում զետեղելու շուրջ: Հայտնի է, որ 19 –րդ դարի վերջին մեթոդիստ Ե. Ղազարյանը լուրջ մեղադրանքներ առաջադրեց Ղ. Աղայանին՝ հեքիաթների միջոցով երեխաներին

[1]Ա. Տեր-Գրիգորյան, Հայոց լեզվի ուսուցման մեթոդիկա, Երևան, 1980, էջ 52:
[2]Ա. Տեր-Գրիգորյան, Ա. Սիմոնյան, Ընթերցանության դասը տարրական դասարաններում, Երևան, 1974, էջ 96:

իրականության մասին սխալ պատկերացում տալու կապակցությամբ: Աղայանն իր հայտնի պատասխանում միանգամայն հերքեց Ղազարյանի տեսակետը՝ գտնելով, որ մարդու հանճարի սաղմերը պետք է նաև նրա լսած հեքիաթներում փնտրել, որովհետև դրանք ոչ միայն հոգուն սնունդ են տալիս, այլև մտքին ու երևակայությանը՝ թռիչք, հետևաբար առանց հեքիաթների ուսումնասիրության երեխաների կրթության գործը կատարյալ լինել չի կարող:

Հեքիաթները դասավանդման իրենց յուրահատուկ ձևն ունեն, որը պայմանավորված է նրանց ժանրային առանձնահատկություններով: Հեքիաթի դասավանդումը ունի երկու հիմնական փուլ՝ բովանդակության կամ սյուժեի հաղորդում և հեքիաթային կամ երևակայական կողմի բացահայտում: Սրանք երկուսն էլ խիստ կարևոր ու անհրաժեշտ են նյութի յուրացման ու նրանից բխող կրթական ու դաստիարակչական նպատակների իրականացման համար և երբեք չեն կարող փոխարինել միմյանց:

Հաճախ հեքիաթներն ավանդվում են պատմվածքի նման, այսինքն՝ սովորեցնում են այն կարդալ, բառերը բացատրել և բովանդակությունը վերարտադրել: Այս դեպքում նյութի մշակումը մնում է կիսատ, ավանդման պրոցեսն ավարտվում է բնագրի մատուցման աստիճանով միայն, իսկ երկրորդ փուլ՝ վերլուծությունն ու դրանից հետևող տրամաբանական եզրակացությունների բխեցումը, մնում է չկատարված, և ուսուցումը փաստորեն իր բուն նպատակին չի հասնում:

Տարրական դասարաններում հեքիաթներն ամենից առաջ պետք է դասավանդել որպես գեղարվեստական ստեղծագործություններ, այսինքն՝ նախապատրաստական զրույցի միջոցով հող նախապատրաստել այն ճիշտ ընկալելու համար, ամբողջ նյութի արտահայտիչ ընթերցման միջոցով ապահովել նրա գեղարվեստական ու դաստիարակչական ներգործությունը, սովորեցնել լավ կարդալ, անծանոթ բառերն ու մտքերը բացատրել, հեքիաթի բովանդակությունը մանրամասնորեն ու համառոտ, փոփոխելով ու ստեղծագործորեն վերարտադրել, գործող անձերն ու նրանց կաբտարած գործողությունները նկարագրել կամ բնութագրել, հարցերով ամփոփել հեքիաթի վերաբերյալ երեխաներին հաղորդած տեղեկությունները և այլն: Հեքիաթի բնագրային ուսումնասիրությունն ավարտվելուց հետո աշակերտների առաջ պետք է բաց անել հեքիաթի հեքիաթային քողը, ցույց տալ նրանում եղած իրականն ու անիրականը,

ճշմարտապատումն ու երևակայականը, իհարկե, այդ ամենը կատարելով կոնկրետ նյութի վրա, պարզ ու մատչելի ձևով, որպեսզի երեխաները տեսական բացատրությունները կապեն գործնականի հետ, յուրաքանչյուր բառ և հասկացություն իմաստավորեն կոնկրետ բովանդակությամբ[3]:

Հեքիաթներում եղած իրականի ու անիրականի սահմանազծումն ու տարբերակումն զգալի դարձնելու համար հաճախ կարելի է նաև համապատասխան օրինակներ բերել արտադասարանային ընթերցանությամ միջոցով երեխաների կարդացած կամ նախորդ դասարաններում անցած հեքիաթներից: Յուրաքանչյուր հեքիաթի դասավանդումը ճիշտ տանելու համար ուսուցիչն ամենից առաջ իր համար պետք է պարզի, թե որոնք են նրա իրական ու անիրական կողմերը, ինչ փոխհարաբերության մեջ են գտնվում դրանք և ինչ են սովորեցնում երեխաներին, ինչու է ժողովուրդը դիմել հարցի հեքիաթային լուծմանը[4]:

Հեքիաթի դասավանդումը պետք է ավարտվի նրա բարոյախոսական կամ դաստիարակչական եզրակացությամբ, որը այս տիպի նյութերի ուսումնասիրության ամենահիմնական և առանձնահատուկ կողմերից մեկն է: Աշակերտներին պետք է հարցնել, թե նրանք ինչ սովորեցին այդ հեքիաթից, որն էր նրա հիմնական միտքը: Հեքիաթների դասավանդման ամենավերջին փուլն այն համապատասխան առածների, ասացվածքների ու հանելուկների հետ կապելն է:

Հեքիաթների դասավանդման այս եղանակից բացի գործածադրման համար հանձնարարելի կարելի է համարել նաև պատմողական և հորինողական ձևերը, որոնք հեքիաթների ուսումնասիրման մեջ բազմազանություն ու հետաքրքրություն կմտցնեն: Պատմողական ձևով անցնելիս հեքիաթը չի ընթերցվում, այլ պատմվում է ուսուցչի կողմից՝ գեղարվեստական պատմումի ու արտահայտչական միջոցների հնարավոր լայն օգտագործմամբ:

Հեքիաթները կարելի է դասավանդել նաև հորինողական ձևով, որը հիմնականում ակտիվ, ստեղծագործական մեթոդ է, և որպես այդպիսին, շատ լայն կիրառություն պետք է ունենա հեքիաաթների ուսումնասիրության ընթացքում: Այս մեթոդով անցնելիս

---

[3] Գյուլամիրյան Ջ., Կարդալու տարրական կարողությունների և խոսքի զարգացումը տարրական դասարաններում, Երևան, 1971, էջ 241:

[4] Ա. Տեր-Գրիգորյան, Մայրենի լեզվի տարրական դասընթացի նյութերի թեմատիկ պլանավորում, Երևան, 1975, էջ 36:

աշակերտներից չենք պահանջում, որ նրանք պատմելիս տառացիորեն ապահովեն հեքիաթի սյուժետային գիծը[5]:

Երեխայի մտքերին ազատություն ենք տալիս՝ թողնելով, որ յուրովի վերարտադրի հեքիաթի բովանդակությունը, ցանկացած փոփոխություններ մտցնի սյուժետային գծի ու դեպքերի զարգացմա մեջ, եթե, իհարկե, այդ փոփոխությունները չեն հակասում հեքիաթի ընդհանուր ոգուն[6]:

Հովհ. Թումանյանի հեքիաթների և բանաստեղծությունների ուսումնասիրությունը տարրական դասարաններում կարելի է անցկացնել հետևյալ պլանով.

- նախապատրաստական զրույց,
- հեքիաթի առաջին ընթերցում (ուսուցչի կողմից),
- հեքիաթի երկրորդ ընթերցում և բառերի բացատրում (աշակերտների կողմից),
- հեքիաթի վերլուծություն՝ ըստ առանձին մասերի, բովանդակության և լեզվի,
- մասերի վերնագրում և պլանի կազմում,
- բովանդակության վերարտադրում,
- կերպարների բնութագրում, բարոյախրատական եզրակացության բխեցում և համապատասխան առածների, ասածվածքների ու հանելուկների ընտրություն,
- հեքիաթի հեքիաթային կողմի բացահայտում,
- ամփոփում:

Ներկայացնենք Հովհաննես Թումանյանի «Սուտասանը» հեքիաթի դասավանդման պլանը երկրորդ դասարանի մայրենիի դասաժամի ընթացքում:

Դասարանը- Երկրորդ

Առարկան- Մայրենի

Թեման- **Հովհաննես Թումանյան «Սուտասանը>>**

Նպատակը- ա/ հատվածաբար ընթերցել և վերլուծել տեքստը

բ/ վերարտադրել տեքստի բովանդակությունը՝ պահպանելով շարադրանքի հաջորդականությունը և գործածելով նորածանոթ բառերը

գ/ ստեղծագործաբար վերարտադրել տեքստի բովանդակությունը՝ վերաբերմունք դրսևորելով հերոսների խոսքի և արարքների նկատմամբ

[5]Գյուլբուդաղյան Ս. Վ., Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա, Երևան, 1987, էջ 102:

[6] Ա. Տեր-Գրիգորյան, Արտադասարանային ընթերցանությունը տարրական դասարաններում, Երևան, 1973, էջ 65:

ԽԹԱՆՈՒՄ-Զրույց՝ <<Կարո՞ղ է սուտը վնասել մարդուն>> հարցի շուրջ

ԻՄԱՍՏԻ ԸՆԿԱԼՈՒՄ- <<Փոս փորողն ինքն է ընկնում իր փորած փոսը>> առածի քննարկում: Կապել հեքիաթի հետ:

Հեքիաթի լուռ ընթերցում՝ առաջադրանքով

Լուռ ընթերցել հեքիաթը նպատասխանել <<Ի՞նչ ասաց աղքատը թագավորին>> հարցին: Լսել երեխաների առաջարկած տարբերակները:

Հեքիաթի բարձրաձայն ընթերցում սովորողների կողմից

Մեկնաբանություններով ընթերցել, զուգահեռ կատարել բառաբացատրական աշխատանք և հատվածների բաժանել:

1-ին հատված *Հարցեր*՝Ինչո՞ւ թագավորը իր երկրում նման հայտարարություն տարածեց: Ի՞նչէր սպասում: *Բառեր* թագավորություն- այստեղհարստություն, ունեցվածք *Վերնագիր* Թագավորի առաջարկությունը
2-րդ հատված *Հարցեր*՝ Ինչպե՞ս թագավորը հաղթեց հովվին: Է՞լ ինչի մասին կարող էր լինել հովվի սուտը: *Բառեր* թագավորնապրածկենա- հարգալից դիմելաձև դագանակ- մահակ, ձեռնափայտ ծխամորճ- ծխելուհարմարանք *Վերնագիր* Հովվի սուտը
3-րդ հատված *Հարցեր*՝ Ի՞նչ սուտ էր հորինել դերձակը: Ինչպե՞ս նրան պատասխանեց թագավորը: *Բառեր* կարկատել- կտորդնել, նորոգել *Վերնագիր* Դերձակի պարտությունը
4-րդ հատված *Հարցեր*՝ Ո՞ր խոսքերով թագավորը դիմավորեց աղքատ գյուղացուն: Ինչո՞ւ: Ինչպե՞ս Թագավորն ընկավ թակարդը: *Բառեր* կոտ- չափել ու փայտե աման *Վերնագիր* Հնարամիտ գյուղացին

Հեքիաթի վերարտադրում

Օգտվելով հատվածների վերնագրերից դուրսբերած բառերից և արտահայտություններից՝ պատմել հեքիաթը՝ լրացնելով պակասող հատվածները:

Աշխատանք լեզվական նյութի շուրջ

Դասագրքերի բանավոր և գրավոր առաջադրանքների կատարում՝ տարբերակվածմոտեցմամբ:

Անդրադարձ նախագծին

<<Սուտասանը>> խմբին հանձնարարել թատրոնի մասին տեղեկություններ գրել և հաջորդ դասին ներկայացնել ամբողջ դասարանին:

ԿՇՌԱԴԱՏՈՒՄ

<<Շատի հետևից ընկնողը քիչն էլ կկորցնի>>առածի վերլուծություն:

Այժմ ներկայացնենք Հովհաննես Թումանյանի «Իրիկուն» հեքիաթի դասավանդման պլանը երկրորդ դասարանի մայրենիի դասաժամի ընթացքում:

Դասարանը- Երկրորդ

Առարկան- Մայրենի

Թեման- Հովհաննես Թումանյան ***<<Իրիկուն>>***

Նպատակը.

- գրական շեշտի և առոգանության պահպանումով սահուն ընթերցել տեքստը,
- կազմել պարզ նախադասություններ՝ ամփոփելով ստեղծագործության հիմնական միտքը, խոսքում օգտագործել նորածանոթ բառերը,
- խմբային աշխատանքի ժամանակ դրսևորել ստեղծագործական որոշակի կարողություններ:

ԽԹԱՆՈՒՄ- Նախապատրաստական զրույց արևի և նրա դերի մասին:

Ի՞նչ է լինում, երբ….	
Արևը ծագում է:	Արևը մայր է մտնում:
Նոր օր էսկսվում: Մարդիկ աշխատում են: Կենդանիները իրենց գործով են զբաղվում:	Մթնում է: Ցրտում է: Բոլորը քնում են:

Գրիր քո տարբերակը և մեկնաբանիր, թե՛ ինչո՞ւ ես այդպես մտածում:	*Գրիր քո տարբերակը և մեկնաբանիր, թե՛ ինչո՞ւ ես այդպես մտածում:*

ԻՄԱՍՏԻ ԸՆԿԱԼՈՒՄ

Աշխատանք տեքստի կանխագուշակման շուրջ՝ ինչո՞ւ է արևը ամեն երեկո <<անհետանում>>, իսկ ամեն առավոտ՝ <<հայտնվում>>: Լսել աշակերտների կարծիքները:

Տեքստի ընթերցում առաջադրանքով՝ ընթերցել <<Իրիկուն>> հեքիաթը և համեմատել բովանդակությունը իրենց կարծիքների հետ:

Զրույց տեքստի բովանդակության շուրջ՝

Հարցեր.

- Ինչո՞ւ է լուսինն այդքան ուրախ:
- Ինչո՞ւ որսորդը որոշեց քնել:
- Ի՞նչ էին անում ցերեկը նապաստակը, թռչնակը, տերևը:
- Ինչո՞ւ էր հոգնելարևը:

Բառային աշխատանք

Բացատրել		**Կիրառել խոսքում**
Իմաստը	**Ուղղագրությունը**	
մանգալ սվսվալ ականջներըսրել որոնել վազտալ	հոգնել ամբողջ որսորդ ծագել	սվսվալ ոստոստել ականջներըսրել ծլվլալ որոնել անքուն

Աշխատանք արտահայտիչ ընթերցանության զարգացման շուրջ

Ընտրովի ընթերցանություն

- Ընթերցել արևի, տերևի, թռչնակի, նապաստակի, որսորդի, լուսնի խոսքերը՝ համապատասխան հնչերանգով:
- Ընթերցել միայն հեղինակի խոսքը:
- Ընթերցելկրկնվող տողերը:
- Ընթերցել դերերով:

Աշխատանք լեզվականության շուրջ:

Կատարել դասանյութից հետո տրված աշխատանքները նախ բանավոր, ապա՝ գրավոր:

Ստեղծագործական աշխատանք խմբերով

- Գտնել՝ ինչ սխալներ կան նկարում:
- Բանաստեղծությունը անվանել <<Առավոտ>> և արթնացնել հերոսներին:

ԿՇՌԱԴԱՏՈՒՄ

- Ի՞նչն է իրական և ի՞նչը հեքիաթային այս ստեղծագործության մեջ: Հիմնավորե՛լ:
- <<Իրիկուն>> ենթախումբը հանձնարարություն է ստանում ուսումնասիրել մատնային թատրոնի մասին և հաջորդ դասին ներկայացնել ամբողջ դասարանին:

Հարցում անցկացնելով դպրոցներում, փորձեցինք պարզել, այդյո՞ք հեքիաթների ազդեցությունը կրտսեր դպրոցական երեխաների երևակայության զարգացման վրա միայն դրական ազդեցություն ունի, թե այնուամենայնիվ այն իր բացասական հետևանքներն էլ է թողնում նրանց մտավոր զարգացման վրա:

Հարցումը անցկացրել եմ Երևանի Արտեմ Մկոյանի անվան №166 հիմնական դպրոցում: Այստեղ մայրենի լեզվի ուսուցիչներից փորձեցինք պարզել մեզ հուզող հարցի պատասխանը, որը սակայն միանշանակ չէր:

Հարցաթերթիկ.

1. Ի՞նչ եք կարծում, հեքիաթները ինչպե՞ս են անդրադառնում երեխաների վրա:
2. Արդյո՞ք դրանց ազդեցությունը դրական են, եթե այո՝ ապա հիմնավորե՛ք:
3. Ո՞րն է հեքիաթների բացասական կողմը:
4. Ի՞նչ մեթոդով եք ուսուցանում հեքիաթները:
5. Հեքիաթների ուսուցման ժամանակ ինչքանով է նպատակահարմար խաղային տեխնոլոգիաների օգտագործումը:

6. Հեքիաթները բովանդակությունը երեխաների մեջ ամրապնդելու համար ի՞նչ տնային առաջադրանքներ եք հանձնարարում նրանց:

Ուսուցիչների մեծամասնությունը այն կարծիքն ուներ, որ հեքիաթները զարգացնում են կրտսեր դպրոցականների երևակայությունը և դրանից զատ զարգացնում են նրանց հաղորդակցվելու կարողությունը, ինչպես նաև մեծապես նպաստում են բանավոր խոսքի զարգացմանը:

Ուսուցիչների մոտ 70%-ը կարծում է, որ հեքիաթների ազդեցությունը երեխաների վրա դրական է, իսկ 30%-ի կարծիքով հեքիաթները նաև ունենում են բացասական ազդեցություն, քանի որ հերոսները, որոնք արտացոլված են հեքիաթներով (խոսքը բացասական հերոսների մասին է) կարող են բացասական ազդել երեխայի հոգեբանության վրա և երեխան նաև կարող է կրկնօրինակել այդ վատ արարքները:



Գծապատկեր 1.

Տվյալների ամփոփումը գծապատկերի տեսքով

Դպրոցնում հեքիաթները հատուկ մեթոդներով են ուսուցանվում: Նախ և առաջ դրանք դասավանդվում են որպես գեղարվեստական ստեղծագործություններ, այսինքն՝ դասի սկզբում տեղի է ունենում նախապատրաստական զրույց ուսուցիչների և աշակերտների միջև, որը կարելի է ասել երեխաների նախապատրաստում է հեքիաթների բովանդակության ճիշտ ընկալմանը:

Խաղային տեխնոլոգիաները նույնպես օգտագործվում հեքիաթների ուսուցման ընթացքում, քանի որ կրտսեր դպրոցական տարիքում երեխաները դեռևս ամեն ինչ ընկալում են խաղի միջոցով, քանի որ խաղային տարիքից՝ նախադպրոցական տարիքից

միանգամից անցում են կատարել մի նոր աշխարհ, որը բոլորովին նման չէ մյուսին, որտեղ ավելի մեծ է պատասխանատվությունը և լրջությունը:

Ուսուցիչները հեքիաթների բովանդակությունը ամրապնդելու համար աշակերտներին հանձնարարում են դուրս գրել այն բառերը, որոնք իրենց համար անծանոթ են և նաև հանձնարարում եմ մի քանի անգամ լուռ և բարձրաձայն ընթերցել հեքիաթը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրությունների և վերլուծությունների արդյունքում հանգել ենք հետևյալ եզրահանգումներին.

- Հարկ է նշել, որ ժողովրդական բանահյուսությունն ազգային հոգևոր արժեքի մի մասն է, որը, սերնդեսերունդ փոխանցվելով, բյուրեղացել, հասել է մինչև մեր օրերը՝ ձևավորելով ու ամբողջացնելով այն կրողների ազգային դիմագիծը և հարուստ նյութ դառնալով ինչպես ժամանակակից գեղարվեստական գրականության, այնպես էլ պատմագիտության և արվեստի զարգացման համար:
- Հեքիաթը վիպական բանահյուսության հնագույն տեսակներից է: Այդ հարուստ և բազմազան նյութը ցույց է տալիս տարբեր ժողովուրդների բանահյուսությունների նմանությունները և համընկնումները՝ միաժամանակ զարմացնելով բովանդակության և լեզվի յուրահատկությամբ:
- Ժողովրդական հեքիաթների կախարդական աշխարհը բնութագրվում է տարածաժամանակային պատկերավորությամբ, որտեղ իրողության տարրերը դիտարկվում են իրենց հատուկ շրջապատից կտրված և միմյանց միջև հաստատված նոր, անսովոր հարաբերություններով: Այսպիսով, տեղի է ունենում շեղում ճշմարտացիությունից և իրական աշխարհի օրենքների հակառակ ըմբռնում:
- Պետք է նշել նաև, որ հեքիաթը հայ ժողովրդական բանահյուսության ամենահին, ամենատարածված և ամենահարուստ ժանրերից մեկն է: Հայկական հեքիաթների հավաքման ու հրատարակման աշխատանքներին մեծապես նպաստել են Գարեգին Սրվանձտյանցը, Սարգիս Հայկունին, Տիգրան Նավասարդյանը, Երվանդ Լալայանը, Սահակ Մովսիսյանը (Բենսե) և ուրիշներ: Հայ ժողովրդական հեքիաթների մեծագույն մասը խորապես ազգային ստեղծագործություններ են, որոնք տարբերվում են ուրիշ ժողովուրդների հեքիաթներից իրենց լեզվով, կյանքի, կենցաղի, բնության նկարագրով և հերոսների հոգեկան կերտվածքով: Դրանցում արտացոլված են հայ ժողովրդի պատմական զարգացման ընթաց- քը, նրա աշխարհայացքն ու աշխարհզգացումը: Այս տեսակետից հայ ժողովրդական գրեթե բոլոր հեքիաթներում դրսևորված են բարու մշտական հաղթանակը չարի,

լույսի հաղթանակը խավարի նկատմամբ և ընդհանրապես կյանքի հաղթանակը մահվան նկատմամբ:

- Տարրական դասարանների ընթերցարաններում ամենից հաճախ հանդիպող նյութերից մեկը հեքիաթներն են: Հեքիաթները ժողովրդական բանահյուսության ամենահին ու ամենատարածված ստեղծագործություններից են, դրանք ծագել են մարդկության մանկության շրջանում, սակայն այսօր էլ շարունակում են ստեղծվել և հուզել ընթերցողներին իրենց անմիջականությամբ, պարզությամբ ու խոր լավատեսությամբ:
- Կրտսեր դպրոցական տարիքի երեխաներին տարրական դասարաններում հանձնարարելի են համարվում կենդանագրական ու իրապատում հեքիաթները միայն, իսկ հրաշապատում հեքիաթները սովորաբար այդ տարիքի երեխաների խորհուրդ չի տրվում կարդալ:
- Նաև նշենք, որ տարրական դասարաններում հեքիաթներն ամենից առաջ պետք է դասավանդել որպես գեղարվեստական ստեղծագործություններ, այսինքն՝ նախապատրաստական զրույցի միջոցով հող նախապատրաստել այն ճիշտ ընկալելու համար, ամբողջ նյութի արտահայտիչ ընթերցման միջոցով ապահովել նրա գեղարվեստական ու դաստիարակչական ներգործությունը, սովորեցնել լավ կարդալ, անծանոթ բառերն ու մտքերը բացատրել, հեքիաթի բովանդակությունը մանրամասնորեն ու համառոտ, փոփոխելով ու ստեղծագործորեն վերարտադրել, գործող անձերն ու նրանց կաբտարած գործողությունները նկարագրել կամ բնութագրել, հարցերով ամփոփել հեքիաթի վերաբերյալ երեխաներին հաղորդած տեղեկությունները և այլն:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ա. Տեր-Գրիգորյան, Հայոց լեզվի ուսուցման մեթոդիկա, Երևան, 1980թ.:
2. Ա. Տեր-Գրիգորյան, Ա. Սիմոնյան, Ընթերցանության դասը տարրական դասարաններում, Երևան, 1974թ.:
3. Ա. Տեր-Գրիգորյան, Մայրենի լեզվի տարրական դասընթացի նյութերի թեմատիկ պլանավորում, Երևան, 1975թ.:
4. Ա. Տեր-Գրիգորյան, Արտադասարանային ընթերցանությունը տարրական դասարաններում, Երևան, 1973թ.:
5. Գյուլամիրյան Ջ., Կարդալու տարրական կարողությունների և խոսքի զարգացումը տարրական դասարաններում, Երևան, 1971թ.:
6. Գյուլբուդաղյան Ս. Վ., Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա, Երևան, 1987թ.: